զի նա սկզբներում Ցովսէփի ցուցմունքներով զեկավարէ և քայլ առ քայլ ընտելանայ թեմի վարչական գործերին. ապա թէ մի քանի ժամանակ անցնելուց յետոյ Ցովսէփը կարող կըլինէր Էջմիածին վերադառնալ։ Ցովսէփի նամակի չարժառիթները հասկանալով, Ղուկաս հայրապետը չարունակում էր. «Դու ես այդքան տարի զբաղուած էիր միայն մի թեմով, որ այնքան հեռաւոր է, սահմանի վրայ է, և յետ ես մնացել ընկերներից։ Աստուծուն և մարդկանց յայտնի է, որ մի աւելի մեծ թեմի արժանի ես. քո թեմն էլ հարկաւ փոքր չէ ուր և մեծ պատիւ կվայելես, բայց շատ հեռաւոր է։ Այդքան վաստակներից յետոյ արժանի էր քեզ մի աւելի մեծ թեմ ստանալ, հօտի և սեպուհների հետ ծանօթանալ, քեզ էլ նրանց ծանօթացնել և այդպիսի կենդրոններում Ս. Աթոռի համար աշխատելով բարի անուն ժառանգել, ինչպէս որ այստեղ ես ժառանգած։ Այս մասին անշուշտ մտածում ես, ինչպէս որ գրած էիր լուսահոգի կաթուղիկոսին, հարցնելով նրան, թէ ո՞ւմ կրցանկար Կ. Պոլիս և կամ Զմիւռնիա առաքել։ Հայրապետն ի վերջոյ ցաւ էր յայտնում, թէ Ցովսէփի նման մի աշխատակից չունի Կ. Պոլսում, ուր իսկապէս, ինչպէս գրում էր նա, վճռւում են Մայր Աթոռին վերաբերեալ գործերը, և խորհուրդ տալիս՝ չյարուիլ հեռաւոր թեմին, որովհետև ազգը սովոր է նրան ընտրել, որին տեսնում ու ճանաչում է, այլ կշռել այս բոլորը և յայտնել իրեն, թէ ինչ կորոշէ։ Արդեօք կաթողիկոսն և Ցովսէփը դարձեալ իրար բան գրեցին այս առթիւ.—յայտնի չէ միայն թէ սրբազանն Էջմիածին չգնաց, թէև իւր ասելով, Ղուկաս կաթողիկոսն երկու անգամ հրաւիրեց նրան, իբր թէ գործերի վարչութիւնը նրան յանձնելու նպատակով։ Թերևս նրա գալուստը դիւրացնելու համար էր, որ կաթողիկոսը Ռուսաստան ուղարկեց Եփրեմ եպիսկոպոսին։ Ցամենայն դէպս՝ կաթողիկոսի մահուան օրը, 28 դեկտեմբերի 1799 տմի, Ցովսէփը դեռ Ռուսաստան էր։

Ինչպէս որ երևում է Էջմիածնի միաբանութեան նամակից յանուն Եփրեմ եպիսկոպոսի 1800 թ. փետրուարի 3-ից, եկեղեցական դասն և հայ ազգի ականաւոր ներկայացուցիչներն երկու անգամ գումարուելով ժողով կազմեցին Ղուկասին յաջորդ ընտրելու համար և վերջապէս վճռեցին Կ. Պոլսի հայոց ժողովրդին թողնել՝ ընտրել մէկին հետևեալ երեք ընտրելիներից, որոնք էին՝ Կ. Պոլսի պատրիարք Դանիէլ սարգիսիսկոպո-

Հայ մատենագրության թուանշային գրադարան